

## ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Ողջոյնի խօսք «Բազմավէպ»ի 175ամեակին նուիրուած  
միջազգային գիտաժողովում

Յարդարժան նախարար,  
Գերապայծառ տէր,  
Սրբազան հայրեր,  
Յարդելի գործընկերներ,

Այսօր հայ մտաւոր մշակոյթի զարգացման արդասաբեր եւ<sup>1</sup>  
բազմադարեան գործընթացում յիշարժան օր է այն առումով, որ  
նշում ենք ոչ միայն հայ լրագրութեան նահապետի, այլև առա-  
ջին գիտական, մասնաւորապէս՝ հայագիտական հանդէսի՝ «Բազմա-  
վէպ»ի հիմնադրման եւ փառաւոր գործունէութեան 175ամեակը։  
Մէկ տարի առաջ մեծ շուրջով նշեցինք Միխիթարեան միաբանու-  
թեան՝ իբրեւ հայ իրականութեան մէջ ըստ էութեան առաջին  
ակադեմիական մեծավաստակ հաստատութեան 300ամեակը։ Ակա-  
դեմիական արտայայտութիւնը պատահական կամ սխալմամբ չգոր-  
ծածեցի, այո, ի սկզբանէ ստեղծուած միաբանութիւնը կրօնա-  
կան-լուսաւորչական բնոյթ ունէր, սակայն զուգահեռաբար հայտ-  
գիտական հետազոտութիւնների ծաւալումը եւ կոթողային յայտ-  
նի գիտական աշխատութիւնների հրապարակումը հաստատեցին,  
որ նա առ այսօր էլ ունի հայ մտաւոր մշակոյթի զարգացման պա-  
տուաւոր առաքելութիւն։

Օրինաչափօրէն արժէքաւոր գիտաստեղծագործական աշխա-  
տանքի շարունակութիւնը պէտք է լինէր ստացուած կարեւոր  
արդիւնքների հրապարակումը թէ՝ ստուարածաւալ աշխատու-  
թիւնների տեսքով, թէ՝ իբրեւ յօդուածներ գիտական հանդէսում,  
ինչպիսին հանդիսացաւ 1843ին ստեղծուած «Բազմավէպ»։

Ի դէպ, ինչպէս վկայում են պատմական աղբիւրները, հան-  
դէսն անցել է կայացման որոշ փուլերով<sup>1</sup>։ Տասնչորս տարի (1843-

1 Տե՛ս Հայկական սովորական համբագիտարան, հ. 2, Երևան 1976, 216:

1857) գործել է որպէս երկշաբաթաթերթ՝ լուսաւորչական եւ գիտահանրամատչելի տեղեկատութեամբ՝ ընթերցողին մատուցելով հետաքրքիր նիւթեր հոգեւոր կեանքի, տնտեսութեան, գիտութեան զարգացման վերաբերեալ:

Այնուհետեւ եւս տասնչորս տարի (1858-1872) գործեց որպէս ամսագիր՝ բնագիտական ու տնտեսական գիտելիքների փոխարէն կարեւորելով գրական-գեղարուեստական ստեղծագործութիւնները, այդ թւում՝ համաշխարհային գրականութիւնից բարձրորակ թարգմանութեամբ:

1872-1889 թուականներին «Բազմավէպ»ը լոյս էր տեսնում՝ որպէս բանասիրական ուղղուածութեամբ եռամսեայ ուսումնաթերթ: Այս փուլում յատկապէս ընդլայնուել են հայագիտական հետազոտութիւնների՝ պատմական, լեզուաբանական, մատենագիտական արդիւնքներին յատկացուող էջերը:

Աստիճանաբար այն ստանում էր առաւելապէս հայագիտական-ակադեմիական ուղղուածութիւն:

1890 թուականից առայսօր «Բազմավէպ»ը հրատարակւում է որպէս հայագիտական, գրական-գեղարուեստական հանդէս: Ուշագրաւ է, որ տարբեր տարիներին հրատարակուել են նաև թեմատիկ համարներ՝ նուիրուած Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան 1500ամեակին, Միսիթար Աբրային, Տանքէի, Պայրոնի ստեղծագործութիւնների արժեւորմանը, Ֆրանսիայի կայսր Նափոլէոնին, որ 1810 Օգոստոսի 17ի հրովարտակով պահպանել է Վենետիկի Ս. Ղազար Կղզու հայ միաբանների առկայ կարգավիճակը, եւ այլն<sup>2</sup>: Նման բացառիկ համարները իւրօրինակ արձագանք էին համաշխարհային եւ հայ գրական դէմքերի, պատմական իրադարձութիւնների յոբեկաններին ու միտուած էին հայ եւ օտարերկրեայ մշակութային, գրական, գիտական, կրօնական գործիչների միջեւ ստեղծագործական կապերի հաստատմանը՝ հիմք դնելով միջազգային համագործակցութեան ընդլայնման տեսլականին:

Հարկ է նշել, որ Միսիթարեան միաբանութիւնը, բացի «Բազմավէպ»ից, ինչպէս յայտնի է հրատարակել է մէկ տասնեակից աւելի պարբերականներ՝ «Տարեգրութիւն» (1799-1802), «Եղանակ Բիւզանդեան» (1803-1820), «Եւրոպա» (1847-1863) եւն:

Սակայն ժամանակի քննութիւնն անցել ու գիտակազմակերպչական, տնտեսական դժուարութիւնները յաղթահարել եւ շա-

րունակում են հրատարակուել «Բազմավիճակ» եւ «Հանդէս ամսօրեան» (1887ից):

Ի հարկէ, գիտաժողովի բաժանմունքներում եւ համընդհանուր նիստերում մասնագիտական անշառութեամբ եւ ըստ ուլորտների կարծեւորուի «Բազմավիճակ»ի անցած ճանապարհը, սակայն ակնյայտ է, որ այն վիթխարի գերակատարութիւնն է ունեցել եւ այսօր էլ ունի հայապահպանութեան ու հայ մտաւոր մշակոյթի, յատկապէն՝ հայագիտութեան զարգացման գործում:

Իւրաքանչիւր յոբելեան լաւ առիթ է գնահատելու յոբելեարի գործունէութիւնը, բայց այն նաեւ խնդիր ունի պատմութեան դասերով ճշգրտելու օրուայ անելիքը, ապագայի տեսլականը: Այս առումով գիտութիւնների ազգային ակադեմիայի հայագիտական կառոյցները, բուհերի նոյն ուղղուածութեան ամբիոնները, հայագիտական գործող հանդէսները, իբրև օրինակ ունենալով «Բազմավիճակ»ի, ընդհանուր առմամբ՝ Միակիթարեան միաբանութեան աւելի քան 300ամեայ գործունէութիւնը, ի. դարի ընթացքում ծափակել եւ այսօր էլ շարունակում են հայապահպանութեան եւ հայ մտաւոր մշակոյթի զարգացման ազգանուէր առաքելութիւնը, միաժամանակ պաշտպանելով ազգային պատմութիւնն ու մշակոյթը ուրոշ օտարերկրեայ գործիչների, յատկապէն հարեւան երկրներից, ոտնձգութիւններից ու խեղաթիւրման փորձերից: Այդպէս առաջացել է քաղաքական հայագիտութիւնը՝ որպէս հայապահպանութեան նոր դրսեւորում:

Մաղթում եմ ստեղծագործական յաջողութիւններ գիտաժողովի մասնակիցներին եւ նոր ձեռքբերումներ «Բազմավիճակ»ի խըմբակազմին:

ԵՌԻՐԱ ՍՈՒՎԱՐԵԱՆ